

## **Հիսուս Քրիստոսին հետևելու որոշման աղոթք**

*Ես հավատում եմ մեկ Աստծու՝ Արարչին՝ ամենազոր Հորը:*

*Ես հրաժարվում եմ բոլոր տեսակ այլ «աստվածներից»:*

*Ես խոստովանում եմ, որ մեղանչել եմ Աստծո դեմ ու մարդկանց դեմ: Մրանով ես անհնազանդ եմ եղել Աստծո հանդեպ, ապստամբել նրա ու նրա օրենքների դեմ:*

*Ես ինքս ինձ չեմ կարող փրկել:*

*Ես հավատում եմ, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծո հարուցյալ Որդին: Նա խաչի վրա իմ փոխարեն մահացավ՝ իր վրա վերցնելով իմ մեղքերի դատապարտությունը: Նա հարություն առավ ինձ համար:*

*Ես շրջադարձ եմ կատարում իմ մեղքերից:*

*Ես խնդրում եմ Քրիստոսի ներման պարգևը, որ ձեռք է բերվել խաչի վրա:*

*Ես այժմ ընդունում եմ ներման այս պարգևը:*

*Ես որոշում եմ ընդունել Աստծուն որպես իմ Հայր և ցանկանում եմ նրանք լինել:*

*Ես ձգտում եմ ստանալ հավիտենական կյանքի պարգևը:*

*Ես իմ կյանքի իրավունքները հանձնում եմ Քրիստոսին և կանչում նրան իշխելու որպես իմ կյանքի Տեր այս օրվանից սկսած:*

*Ես հրաժարվում եմ բոլոր այլ հոգևոր կապվածություններից ու պայմանավորվածություններից: Ես հատկապես հրաժարվում եմ «շահադա»-յից և խզում եմ ինձ վրա տարածվող ամեն իրավունք:*

*Ես մերժում եմ Սատանային և չարի ամեն դրսևորում: Ես խզում եմ իմ բոլոր աստվածամոտ համաձայնությունները, որ տվել եմ չար ոգիներին կամ չար սկզբունքներին:*

*Ես հրաժարվում եմ ուրիշ մարդկանց հետ իմ ունեցած բոլոր աստվածամոտ կապերից, հատկապես այն մարդկանցից, ովքեր ինձ վրա իշխանություն են բանեցրել:*

*Ես հրաժարվում եմ իմ նախնիների արած բոլոր աստվածամոտ ուխտերից, որոնք ինչ-որ կերպ տարածվել ու ազդել են ինձ վրա:*

*Ես հրաժարվում եմ հոգեկան կամ հոգևոր բոլոր ընդունակություններից, որոնք Աստծուց չեն գալիս Հիսուս Քրիստոսի միջոցով:*

*Ես խնդրում եմ Սուրբ Հոգու խոստացված պարգևը:*

Հա՛յր Աստված, խնդրո՛ւմ եմ ազատագի՛ր ու փոխի՛ր ինձ, որպեսզի ես քեզ ու միմիայն քեզ փառք բերեմ:

Թող Սուրբ Հոգու պարզևնե՛րն իմ մեջ գործեն, որպեսզի իմ կյանքով քեզ պատիվ տամ և սիրեմ ուրիշներին:

Ես մարդկանց և բոլոր հոգևոր հեղինակությունների առաջ հոչակում եմ, որ ես նվիրվում ու կապվում եմ Աստծուն Հիսուս Քրիստոսի միջոցով:

Ես հոչակում եմ, որ Երկնքի քաղաքացի եմ: Աստված է իմ պաշտպանը: Սուրբ Հոգու օգնությամբ ես որոշում եմ իմ ողջ կյանքում ենթարկվել և հետևել միայն ու միայն Հիսուս Քրիստոսին՝ իմ Տիրոջը: